

ԱՆՍԵՆՆ Է ՊԱՐՏԻԱՅԻ ՄԻԱՄՆՈՒԹՅՈՒՆԸ

Ռեսպուբլիկայի պարտիական կազմակերպությունները միահամուռ հավանություն են տալիս «Անհատի պաշտամունքը եվ նրա հետեվանքները հաղթահարելու մասին» ՍՄԿՊ Կենտկոմի որոշմանը



ՄԵՐ ԽՈՂԵՐԻ ԸՄՏԱՆՇՅՈՒԹՅՈՒՆԸ

Երևանի Կուլբիշևի անվան կահույքի ֆաբրիկայի կոմունիստները և անպարտիականները մեծ գոհունակությամբ ընդունեցին ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի որոշումը «Անհատի պաշտամունքը և նրա հետեվանքները հաղթահարելու մասին»:

Հուլիսի 9-ին Կենտրոնական Կոմիտեի որոշումը քննարկվեց ֆաբրիկայի սկզբնական պարտկազմակերպության ղեկավար ժողովում:

Զեկուցողը՝ ՀԿՊ Ստալինյան շրջկոմի հրահանգիչ ընկ. Ս. Մարգարյանը, և ելույթ ունեցող ընկերները, խոսելով Կենտրոնական Կոմիտեի որոշման պատմական վիթխարի նշանակության մասին, նշեցին, որ այն արտահայտում է սովետական մարդկանց իղձերն ու խոհերը, վկայում է մեր պարտիայի միասնության ու համախմբվածության մասին:

Պարտիան, — ասաց իր ելույթում պարտկազմակերպության քարտուղար թ. Սահակյանը, — չէր կարող աչք փակել այնպիսի երևույթի հանդեպ, ինչպիսին է անհատի պաշտամունքը, որը խորթ է մարքսիզմ-լենինիզմի ոգուն: Շատ բնական է, որ անհատի պաշտամունքի հետեվանքները հաղթահարելու հարցին զգալի տեղ տրվեց պարտիայի XX համագումարի որոշումներում: Այդ որոշումներից շատ ժամանակ չի անցել, բայց դրանց կենսական մեծ ուժը իր կոնկրետ գրեթե ամբողջ կոմունիստական շինարարության բոլոր բնագավառներում:

Պլանային բաժնի վարիչ Ա. Ղազարյանն ասաց, որ պարտիայի XX համագումարից հետո իրենց մոտ ավելի է բարձրացել բանվորների ակտիվությունն ու նախաձեռնությունը: Անհրաժեշտ է, ասաց նա, որ պարտիայի քաղկոմի և շրջկոմի աշխատողներն ավելի հաճախ լինեն մեզ մոտ և ունկրնդրեն բանվորների ձայնին:

Ատաղձագործ Լ. Նիկողոսյանը խրնդի դրեց ավելի ուժեղացնել կոլեկտիվում կատարվող քաղաքական-դատարարական աշխատանքը, ամեն կերպ ամրապնդել աշխատանքային և արտադրական կարգապահությունը:

Միահամուռ հավանություն տալով և միանալով Կենտրոնական Կոմիտեի որոշմանը, ժողովի մասնակիցները չեք պարտադրականություն հայտնեցին ավելի սերտորեն համախմբվել հարազատ պարտիայի շուրջը, նոր ուժով պայքարել ՍՄԿՊ XX համագումարի որոշումների իրագործման համար:



ԸՆԴԴԵՄ ԱՆՀԱՏԻ ՊԱՇՏԱՄՈՒՆԻՔԻ

«Անհատի պաշտամունքը և նրա հետեվանքները հաղթահարելու մասին» ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի պատմական որոշման քննարկմանն էր նվիրված Երևանի Միկոյանի շրջանի տեղադրված քիմիատի պարտիական կազմակերպության ղեկավար ժողովը:

— Մենք ուշադրությամբ ծանոթացանք մեծագույն կարևորություն ունեցող այդ փաստաթղթին, — ասաց կոմունիստ թ. Հարությունյանը: — Դրանում ցույց է տրված, թե ինչպես առաջացավ և զարգացավ Ստալինի անձնավորության պաշտամունքը: Մենք լիովին հավանություն ենք տալիս ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի միջոցառումներին, որոնց նպատակն է հաղթահարել անհատի պաշտամունքը, վերացնել նրա վնասակար հետեվանքները պարտիական և պետական աշխատանքի բոլոր բնագավառներում, խստորեն կիրառել մեր մեծ ուսուցիչ Լենինի մշակած պարտիական կյանքի նորմաները:

— Մեր ժողովրդի ամեն մի հաջողություն, — իր ելույթում ասաց անպարտիական բանվորուհի Վ. Հակոբյանը, — անխղճիտորեն կապված է հարազատ Կոմունիստական պարտիայի

անվան հետ: Լիովին հավանություն տալով Կենտրոնական Կոմիտեի որոշմանը, մենք պետք է ձգտենք բարելավել արտադրանքի որակը, ժամանակին կատարել աշխատավորների պատվերները, բարձրացնել աշխատանքային կարգապահությունը:

— Մեր արտասահմանյան բարեկամները, — ասաց կոմբինատի դիրեկտոր Մ. Մելքումյանը, — ուրախանում են ՍՍՌՄ-ի հաջողություններով, իսկ թշնամիները, աղավաղելով փաստերը, շարախնդում են, փորձում են ստվեր գցել մեր հասարակարգի վրա: Բայց նրանց ոչ մի փորձը հաջողություն չի ունենա: Մենք է՛լ ավելի սերտորեն կհամախմբվենք հարազատ պարտիայի շուրջը և վստահորեն կզննանք դեպի կոմունիզմ:

Պարտիական ժողովը միահամուռ հավանություն տվեց Կենտրոնական Կոմիտեի որոշմանը և կոմբինատի աշխատողներին կոչ արեց՝ բոլոր ուժերը մոբիլիզացնել տարեկան պլանը նույնմբերի 29-ին կատարելու, երկրին 180 հազար ուղբու արտապլանային արտադրանք տալու մասին մրցությունը ստանձնած պարտավորությունը հաջողությամբ կատարելու համար:

ՊԱՐՏԻԱՅԻ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱՊԸ ԱՆԽՁԵԼԻ Է

Մարտունու շրջանի Վարդենիկ գյուղի կոլտնտեսականները, չեքմ հավանություն տալով «Անհատի պաշտամունքը և նրա հետեվանքները հաղթահարելու մասին» ՍՄԿՊ Կենտկոմի որոշմանը, միահամուռ կերպով նշում են, որ պատմական մեծ նշանակություն ունեցող այդ փաստաթուղթն ուղղված է սովետական հասարակարգի հետագա է՛լ ավելի ամրապնդման, միջազգային բանվորական շարժման զարգացման, պետությունների խաղաղ գոյակցության նպատակին:

Օրերս Կենտրոնական Կոմիտեի այդ որոշումը քննարկվեց կոլտնտեսության սկզբնական պարտկազմակերպության ղեկավար ժողովում: Քննարկումն անցավ աշխույժ, մտքերի լայն փոխանակման մթնոլորտում: Կոլտնտեսական Կ. Նիկողոսյանն իր ելույթում ասաց.

— Մեր հարազատ Կոմունիստական պարտիան ճիշտ վարվեց, ժողովրդից շթաքցնելով ճշմարտությունը: Դա խոսում է ժողովրդի հետ պարտիա-

յի անխղճի կապի մասին: Դրա մեջ է նրա ուժն ու հզորությունը:

— Պատմական փորձով մենք համոզվել ենք, — ասաց գյուղատնտես Ա. Բաղդասարյանը, — որ մեր պարտիան ուրիշ շահեր չունի, բացի ժողովրդի շահերը: Սոցիալիստական արդյունաբերության հետագա զարգացման, գյուղատնտեսության շեշտակի վերելքի ուղղությամբ պարտիայի մշակած միջոցառումները Կենտրոնական Կոմիտեի կոլեկտիվ ղեկավարման արդյունքն են: Պարտիական կյանքի լենինյան նորմաների վերականգնումը ավելի անսասան է դարձնում մեր հավատը պարտիայի հանդեպ:

Ժողովի մասնակիցները միահամուռ հավանություն տվեցին Կենտրոնական Կոմիտեի որոշմանը և պարտավորվեցին ավելի ակտիվորեն պայքարել գյուղատնտեսության շեշտակի վերելքի համար:

Թ. ՆԱԼԱՆԴՅԱՆ
(Մեր սեփ. թղթ.)

ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ռեսպուբլիկայի մայրաքաղաքի աշխատավորների ուշադրության կենտրոնում է գտնվում «Անհատի պաշտամունքը և նրա հետեվանքները հաղթահարելու մասին» ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի որոշումը: Ձեռնարկություններում, հիմնարկներում, ուսումնական ու գիտական հաստատություններում և բնակչության համար կազմակերպվում են զբոսայգիներ, զեկուցումներ

ներ ու դասախոսություններ՝ նվիրված այդ կարևորագույն փաստաթղթին: Պարտիայի քաղաքային ու շրջաքաղաքի կոմիտեիները պրոպագանդիստների և ագիտատորների համար կազմակերպում են զեկուցումներ ու դասախոսություններ, որոնք օգնում են նրանց ճիշտ ըմբռնելու և պարզաբանելու Կենտկոմի պատմական որոշումը:

Երեկ Հայկական ՍՍՌ Միլիտարների Սովետի նիստերի դահլիճում տեղի ու-

նեցավ պրոպագանդիստների համաքաղաքային խորհրդակցություն, որին մասնակցեց շուրջ 500 մարդ:

Խորհրդակցությունում «Անհատի պաշտամունքը և նրա հետեվանքները հաղթահարելու մասին» ՍՄԿՊ Կենտկոմի որոշման և պրոպագանդիստական աշխատանքի խնդիրների մասին» Թեմայով զեկուցեց Հայաստանի ԿՊ Կենտկոմի քարտուղար ընկ. Բ. Սարկիսովը: